



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱԿՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊՒ ԱՐՇԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 7(57), 30 սեպտեմբեր, 2023թ.
ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

2023թ. սեպտեմբերի 20-ին Չինաստանի ժողովրդական Հանրապետության Լիանյունգանգ քաղաքը հյուրընկալել էր Համաշխարհային անվտանգության համագործակցության ֆորումի 2023 թվականի համաժողովը, որին մասնակցում էր 47 երկրներից ավելի քան 700 ներկայացուցիչ, այդ թվում՝ Հայաստան, Քենիա, Նիկարագուա, Նոր Զելանդիա, Եթովպիա, Վիետնամ, Թաիլանդ, Կամբոջա, Բրազիլիա, Սերբիա, Պակիստան, Ֆրանսիա, Ղազախստան և այլ երկրներ:

Կրթահամալիրից մասնակցում էին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը և ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության

կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կարինե Սաֆարյանը:

Ելույթները նվիրված էին համաշխարհային անվտանգության հեռանկարի կանխատեսմանը, հասարակական անվտանգության ոլորտում բազմակողմանի համագործակցությանը, կառավարման կարողությունների զարգացմանը, անվտանգության ոլորտում ձեռք բերված նվաճումների փոխանակմանը:

Նշված ֆորումի շրջանակում սեպտեմբերի 21-ին տեղի ունեցավ «Անվտանգության գլոբալիզացված մարտահրավերներ և ոստիկանական կրթության կարողությունների կատա-



րելագործում» թեմայով ենթաֆորումը, որի ընթացքում ելույթով հանդես եկավ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանը: Նա իր ելույթում անդրադարձավ անվտանգության ժամանակակից մարտահրավերներին և դրանց դիմակայելու համար ոստիկանական կրթության կատարելագործմանն ուղղված անհրաժեշտ քայլերին: Մ. Մուրադյանը ներկայացրեց նաև ոստիկանական կրթության բարելավման ուղղությամբ Կրթահամալիրում իրականացված և ընթացիկ աշխատանքները:

Ենթաֆորումին մասնակից կրթական հաստատությունների ղեկավարների ձեռքբերումով տրվեց Չինաստանի հասարակական անվտանգության համալսարանի նախաձեռնությամբ մշակված «Ապագային միտված

տաղանդների զարգացման» 2023-2024թթ. գործողությունների նախաձեռնության մեկնարկը:

Կրթահամալիրի պետը երկկողմանի հանդիպումներ ունեցավ Չինաստանի հասարակական անվտանգության համալսարանի նախագահի, Իրանի Իսլամական Հանրապետության Ամինի ոստիկանական համալսարանի, Ուգանդայի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի ղեկավարների հետ: Քննարկվեցին Կրթահամալիրի և նշված երկրների ոստիկանական կրթական հաստատությունների միջև համագործակցության ամրապնդմանն առնչվող հարցեր, այդ թվում՝ համատեղ գիտական հետազոտությունների անցկացում, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակում, ինչպես նաև երկուստեք հետաքրքրություններ կապված այլ հարցեր:



ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ԵՐԿԱՐԱՄՅԱ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 14-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանի ղլխավորությամբ կայացավ քոլեջի անձնակազմի հետ հերթական հանդիպումը: Առիթը խորհրդանշական էր՝ վաստակած հանգստի էին ճանապարհում Կրթահամալիրի քոլեջի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մամբրե Նազարյանին՝ սահմանային տարիքը լրանալու և երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ:

Կրթահամալիրի պետն այսօր արդեն պաշտոնաթող գնդապետին շնորհակալություն հայտնեց իրավապահ ոլորտում երկար տարիների բարեխիղճ ծառայության համար և հանձնեց ՀՀ ՆԳՆ նախարարի հրամանով պարգևատրված գերազանց ծառայության համար կրծքանշանը:

Շնորհավորում ենք ոստիկանական տարբեր սերունդներ կրթած գիտնականին՝ բազմամյա ծառայության կենսաթոշակի անցնելու ու պարգևատրվելու կապակցությամբ՝ մաղթելով ստեղծագործական ու գիտամանկավարժական նոր վերելքներ:



ՀԱՍՏԱՏՈՒՆ ԶԱՅԼԵՐՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՊԱԳԱ



Առաջադեմ կրթությունը ՀՀ ներքին գործերի նախարարության, մասնավորապես՝ Կրթահամալիրի առաջնային առաքելություններից է, իսկ դրա դրսևորումներից՝ գերազանցակներին խրախուսելու ավանդույթը:

Ուսման ընթացքում դրական արդյունքներ ցուցաբերած՝ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա ամփոփումը ուսուցման 7 սովորողի և քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի 4 սովորողի հատկացվել է ՀՀ ՆԳՆ նախարարի կրթա-

թոշակ:

Շնորհավորում ենք մեր գերազանցակներին և մաղթում, որ իրենց աշխատասիրությունն ու ոստիկանական համակարգում ցուցաբերած գիտելիքահեն ծառայությունը լինի արդյունավետ համակցված շարունակական կրթությամբ ու ինքնազարգացման անվերջ ճգնաժամերով:

1. Ակադեմիայի առկա ամփոփումը ուսուցման երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ լեյտենանտ Յուլիաննիսյան Արա,
2. Ակադեմիայի առկա ամփոփումը ուսուցման երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության կրտսեր սերժանտ Մանուկյան Լիանա,
3. Ակադեմիայի առկա ամփոփումը ուսուցման երրորդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Զիլարյան Նահիր,
4. Ակադեմիայի առկա ամփոփումը ուսուցման երրորդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Յովհաննիսյան Անգելինա,
5. Ակադեմիայի առկա ամփոփումը ուսուցման երրորդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Սարուխանյան Սյուզաննա,
6. Ակադեմիայի առկա ամփոփումը ուսուցման երրորդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Տեփանյան Ժաննա,
7. Ակադեմիայի առկա ամփոփումը ուսուցման չորրորդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ լեյտենանտ Սանթրոսյան Ռոզա,
8. Քոլեջի երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Ազիզյան Անի,
9. Քոլեջի երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Սկրտչյան Գոհար,
10. Քոլեջի երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության կրտսեր սերժանտ Ռսկանյան Ասյա,
11. Քոլեջի երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Վարդանյան Գևորգ:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայերի հայրենիքը հայկական լեռնաշխարհն է: Աստղ է առաջացել և կազմավորվել հայ ժողովուրդը, այստեղ է անցել իր բազմադարյա պատմության ուղին:

Պատմական սկզբնաղբյուրներում «անմահության երկիր», «աստվածային սուրբ օրինաց երկիր», «աստվածների կառն» և այլ պատվանուններով հայտնի Հայկական լեռնաշխարհի իսկական բնիկ տիրոջ՝ հայի համար իր երկրի ու ժողովրդի ազատությունն ի սկզբանե բացարձակ արժեք էր: Մենք՝ հայերս, հաստատապես գիտենք, որ Հայկ Նահապետի տոհմն ու նրան հաջորդած մեր բոլոր սերունդները միշտ էլ «կան հաղթություն, կան հաղթական մահ» անխախտելի սկզբունքով պայքարել են հանուն հայրենիքի ազատության:

Անկախության ճանապարհին Հայաստանն ունեցել է և՛ նվաճումներ, և՛ ցավալի կորուստներ: Ամենամեծ նվաճումն ինքնին անկախ պետականության հռչակումն էր: Մեծագույն մյուս նվաճումն արցախյան հաղթանակն էր:

Անշուշտ, անկախության հաստատման ճանապարհը ենթադրում է նաև զրկանքներ ու անվերադարձ կորուստներ, սակայն ավելի լավ է մեռնել անկախության համար, քան ապրել շղթայված, և մենք գիտակցում ենք, որ անկախությունն անվճար չէ, այն արժե օրական մեկ գինովոր:

Իրավամբ, հայ ժողովրդի պատմությունը հանուն ազատության մղվող պայքարի պատմություն է: Այդ պայքարը փոփոխական հաջողություններով շարունակվել է դարեր ու հազարամյակներ, ուժեղացել է կամ թուլացել, բայց երբեք չի դադարել: Մեր արքայական ու նախարարական տները, իսկ ավելի ուշ շրջանում՝ ազգային առաջնորդները, թիկունքում ունենալով համազգային աջակցություն, իրար են փոխանցել հայ ինքնության և ոգու դրոշմը: Անդադար պայքարի ընթացքում կռվել են ու՝ բանակցել, կառուցել են ու արարել, արդյունքում՝ մեզ ժառանգություն են թողել անկրկնելի արվեստ ու մշակույթ, որը մինչ օրս հիացնում ու զարմացնում է քաղաքակիրթ մարդկությանը:

Ֆրանսիացի պատմաբան ու հնագետ Ժակ դը Մորգանի բնորոշմամբ՝ հայը միշտ էլ «եղել է արժանավոր և դյուցազնական: Արժանավոր, որովհետև հայ ժողովուրդը, հակառակ իր ծով

դժբախտություններին, ամուր կառչած է մնացել իր հավատքին, իր լեզվին, իր սովորություններին: Դյուցազնական, որովհետև Հայաստանը չի գոհացել արցունք թափելով, այլ բազմաթիվ պարագաներում վիրավորված զգալով իր անմաթանկագին զգացմունքների մեջ, գենք է վերցրել և արյան գնով հատուցել իր հոգվույն ըմբոստությունը»:

Հավատամք, որ մեր բազմաչարչար ժողովրդին հայրենիքը կորցնելու վտանգ չի սպառնա:

20-րդ դարում Հայաստանը երկու անգամ է վերականգնել անկախ պետականությունը: Ահա այդ պատճառով է, որ Հայաստանը, ըստ էության, ունի անկախության երկու տոն. սեպտեմբերի 21 և մայիսի 28, որն անվանվում է Հանրապետության օր: Սակայն միանգամայն տարբեր էին ժամանակներն ու հանգամանքները, երբ հռչակվեցին Հայաստանի Առաջին և Երրորդ Հանրապետությունները:

1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում տեղի ունեցավ հանրաքվե, և հայ ժողովրդի ճակատագրական «այո»-ն իրականացրեց անկախ, ազատ և ինքնիշխան պետություն ունենալու՝ հայ ժողովրդի երազանքը:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, և արդեն 32 տարի սեպտեմբերի 21-ը ոչ աշխատանքային է:

Մեր անկախության գլխավոր նվաճումը հայոց բանակն է՝ մեր երկրի ու ժողովրդի պաշտպանության ու անվտանգության ապահովման, հայության ապագայի ու զարգացման երաշխիքը: Հայաստանն իր անկախության 32-րդ տարեդարձը դիմավորում է անվտանգության ոլորտի մեծ լարվածության պայմաններում, ահռելի մարտահրավերների ռեժիմում, որոնք իրենց մասշտաբով գերազանցում են հայկական պետականության կարողությունն ու ներուժը մի քանի անգամ՝ դառնալով այդ պետականության թե՛ ռազմական, թե՛ քաղաքական սպառնալիք: Եվ այսօր՝ անկախության տարեդարձի օրը, բացարձակապես ավելորդ է անկախության արժեքի մասին ելույթների և ճառերի, երբեմն նաև բաժանաճառերի շքերթը: Մենք իրավունք չունենք պառակտվելու, մեղ անձնական խնդիրներ լուծելու. մի՞թե պատմության դասերը չկոփեցին մեր ազգային ինքնագիտակցությունն ու պայքարելու կամքը: 3

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ



Սեպտեմբերի 13-ին Կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավար կազմին և տնտեսական բաժնի անձնակազմին ներկայացրեց Կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և տնտեսական բաժնի նորանշանակ պետ, ոստիկանության փոխգնդապետ Հրաչիկ Մարգարյանին:

Շնորհավորական ուղերձում Մ. Մուրադյանն ընդգծեց այն կարևոր առաքելությունը, որն իրականացնում է տնտեսական

բաժնի՝ կրթական գործընթացն ավելի բարենպաստ ու ժամանակակից պայմաններով ապահովելու համար:

Հ. Մարգարյանն էլ իր հերթին շնորհակալություն հայտնեց և ասաց, որ իր պատասխանատվությամբ ու բարեխիղճ աշխատանքով շարունակելու է իրականացնել իրեն վստահված առաքելությունը:

Շնորհավորում ենք ոստիկանության փոխգնդապետ Հրաչիկ Մարգարյանին՝ տնտեսական բաժնի պետ նշանակվելու կապակցությամբ:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ



Սեպտեմբերի 25-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական կենտրոնում մեկնարկել է 2023-2024 ուսումնական տարվա «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով սովորողների պետական ամփոփիչ ատեստավորումը (լրացուցիչ կրթական ծրագրով ամփոփիչ համալիր քննություն), որին մասնակցում էր 75 սովորող:

Ատեստավորման համար ձևավորված երեք հանձնաժողովներում ընդգրկված են Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ, պայմանագրային դասախոսներ, ԻՍԻՅԱՓ-ի հայաստանյան ներկայացուցիչներ, ինչպես նաև պարեկային ծառայության ծառայողներ:

Հաջողություն ենք մաղթում սովորողներին:

ԱՆՉԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ԱՏԱՅԱՆ ԻՐԵՆՑ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ



Սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանության և Բրիտանական խորհրդի նախաձեռնությամբ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ծառայողների համար նախատեսված անգլերենի դասընթացն ավարտելու կապակցությամբ հավաստագրերի հանձնման արարողությունը: Այդ առիթով ՀՀ ՆԳՆ կրթահամալիր էին այցելել Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում ՄԾ Ռազմական կցորդի տեղակալ, Էսկադրիլիայի հրամանատար Ջոան Ռոն, ՀՀ-ում Բրիտանական խորհրդի ծրագրերի համակարգող Մարիամ Արզումանյանը և ՀՀ-ում Բրիտանիայի դեսպանության պաշտպանության ոլորտում համագործակցության հարցերով պատասխանատու Անդրանիկ Իսրայելյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մամուկ Մուրադյանը: Նա, կարևորելով նմանօրինակ նախաձեռնությունները և անգլերենի իմացությունը ժամանակակից աշխարհում, շնորհակալություն հայտնեց Բրիտանական խորհրդին և ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանությանը: Ջոան Ռոն, շնորհավորելով դասընթացի շրջանավարտներին, հույս հայտնեց, որ անգլերենի իմացությունը խթան կդառնա մասնագիտական գործունեության կատարելագործման համար:

ՆՊԱՏԱԿԱՍՆԱՅ ԱՊԱԳԱ ՈՍՏԻԿԱՆԸ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ գրուցել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրի 4-րդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ, Գեռա Սիրադեղյանի հետ:

Ինչպիսի՞ն էր փոքրիկ Գեռան: Երեք նախադասությամբ պատմի՞ր թո՞մասին:

- Փոքրիկ Գեռան ակտիվ, ընկերասեր և մի փոքր չարածճի էր: Սիրում էր շատախոսել և անդադար ծիծաղեցնել հարազատներին: Մինչ այժմ գրեթե ոչինչ չի փոխվել:

Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Մանկապարտեզի տարիներից յուրաքանչյուր հանդիսակատարությունից հետո ծնողներս մի փունջ ծաղիկներ էին ինձ նվիրում: Այս ավանդույթը մինչ այժմ պահպանվել է: Փոքրուց ամենաշատը սիրել էմ փազվեր հավաքելը, այս «խաղը» դեռևս ամենակամուրջ ու հետաքրքիրն է ինձ համար:

Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Այդ տարիներն ինձ համար եղել են աշխարհին նոր հայացքով և գույներով նայելու տարիներ:

Ի՞նչ էք կարծում, կա՞ն վատ գրքեր:

- Յուրաքանչյուր գիրք ունի ասելիք, և միայն համապատասխան գիտակցություն ունենալով կարելի է գտնել գրքի «բանալին»: Եթե հանդիպել եք «վատ» գրքի, ապա փորձեք այն վերընթերցել որոշ ժամանակ անց, հնարավոր է՝ սխալված լինեք...

Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը:

- Ամենատպավորված և բազմիցս ընթերցածս պատմությունը Նիլ Գեյմանի «Ծուխ և հայելիներ» ժողովածուի «Հարսանեկան նվեր»-ն է, որը մինչ այժմ վերընթերցելով՝ նորովի եմ ընկալում:

Խոսենք նախասիրություններից, ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Տիեզերքի մասին թեմաները միշտ արդի են և անբացահայտելի: Այս երևույթն ուսումնասիրելով՝ ժամանակի առկայության մասին կարելի է մոռանալ:

Ոստիկանական համակարգն ու՞ժային կառույց է: Կին, ոստիկան, այս հակասություններն ինչպե՞ս ես կարգավորում:

Այս մասնագիտությունը պահանջում է ուժեղ, տղամարդկային հատկանիշներ:

- Յուրաքանչյուր ունենք կանացի և տղամարդկային ուժեր, և ոստիկանի դերում կինը երբեք չպետք է մոռանա իր կանացիության մասին, բայց նաև ընդունակ լինի որոշակի հավասարակշռություն գտնել այդ երկու հակադրող, սակայն միաժամանակ իրար փոխլրացնող ուժերի միջև:

Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

Տարբեր մասնագիտությունների՝ հոգեբանի, վիրաբույժի, միջազգային հարաբերությունների մասնագետի մեջ երկար վարանելու արդյունքում ընտրեցի իրավաբանի՝ վերը նշված մասնագիտությունների համախառնուրդը:

Ուսանողական տարիներ, ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Բարդ, համակարգված, հետաքրքիր, անկումներով և վերելքներով լի ծանապարհ է կյանքը կրթահամալիրում, որն անցնելով՝ կյանքի մարտահրավերները դառնում են հաղթահարելի:

Ո՞րն է ոստիկան դառնալու քո շարժառիթը:

- Արդարության իմ մասնաբաժնով վերականգնելու ցանկությունը:

Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունը, ի՞նչ կընտրեիր:

- Ես ի սկզբանե այնպիսի մասնագիտություն էի ցանկանում ընտրել, որ ամենացորդ նվիրումով ժողովրդին ծառայելու հնարավորություն ունենամ, ուստի նորից կընտրեի ոստիկանի մասնագիտությունը:

Ի՞նչ խորհուրդ կտաս նրանց, ովքեր ցանկանում են ընտրել Կրթահամալիրը:

- Ճիշտ կշռադատեք ձեր ուժերը և պատրաստ եղեք կյանքի ցանկացած մարտահրավերի:

Թե՛մա, որի շուրջ անդադար կխոսես:

- Տիեզերք: Արդեն նշել եմ, որ դա հենց այն թեման է, որում անդադար կարելի է խորանալ և նորանոր բաներ հայտնաբերել: Դա անվերջանալի մի ճանապարհորդություն է, որն ամեն անգամ անցնելով՝ միևնույն է, չես դադարում զարմանալ:



Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Կյանքի շարժիչ ուժը հենց կյանքն է, քանի որ այն բազում արկածներով և կարևոր հուշերով հագեցած ճանապարհ է:

Բից հարցեր

Պատասխանում ենք կարճ և արագ:

Երեք բառ, որով կընտրոշես ինքդ քեզ:

- Նախաձեռնող, լավատես, հնարամիտ:

Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Այսօր ես մեկ օրով ավելի կմոտենամ իմ նպատակին:

Օրն սկսում ես ժամը...

- 7-ին, սակայն աշխատում եմ օրս սկսել արևածագի հետ միասին:

Սիրածդ աֆորիզմը:

- Բացասական իրավիճակները կերտում են դրականի նախադրյալը:

Սիրելի գրադուրը:

- Հետևել բնությանը:

Խորհուրդ, որը կտայիր:

- Գործելու լավագույն ժամանակը՝ «ՀԻՄԱ»:

Իսկ վերջում. (ավելացրու՝ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին):

- Հիմարություն է կյանքի կողմից տրված հնարավորություններից հրաժարվելը վախի պատրվակով:

Հարցազրույցը վարեց առաջատար մասնագետ Լիանա Սահակյանը

Ստեղծագործում են մերոնք

ԱՆՉԵԹԵՑ ԿՅԱՆՔ

Անհեթեթ կյանք, ինձ բաժին հասած անհեթեթ բախտ, Քարն ուսերիս վրա, ցավը սրտիս տակ՝ Շարժվում եմ առաջ՝ Երկրիս պես փխրուն, ազգիս պես պինդ: Քանովում է հոգիս ամեն մանրուքից, Բայց ոտքի վրա տանում եմ կրկին Ցավերն ու դավերն իմ դժկամ բախտի: Երկրիս պես փխրուն ու ազգիս պես պինդ Ապրում եմ ցավերն անհեթեթ կյանքի: Իսկ ե՞րբ կլսվի ձայնը իմ ողբի, Ե՞րբ է, որ ցավերն արցունք կդառնան, Որ ինչ-որ մեկը իմ ցավով ապրի, Որ վերջերը երկրիս սպիանան...



ԱՇՈՒՆ Է

Աշխարհն աշուն է ապրում, Աշխարհը սիրում է նորից, Իսկ մենք այստեղ՝ լեռներում, Փորձում ենք ապրել սկզբից... Փորձում ենք սիրել աշխարհը, Փորձում ենք մերել աշխարհին, Մեր սրտերն այրում է աշխարհի ցավը, Բայց մեր ցավը հասու չէ՝ աշխարհին... Աշխարհն աշուն է ապրում, Սիրում է, ներում, խռովում, Իսկ մենք չենք խռովում մեր բախտից, Որ աշուն է, բայց մենք չենք սիրում նորից...

Ալիկ Հովհաննիսյան
Ակադեմիա, 2-րդ կուրս,
ոստիկանության լեյտենանտ

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

Ինչպես լավ ապրած օրն է բերում երջանիկ թուն, այնպես էլ լավ ապրած կյանքը բերում է երջանիկ մահ:

Լեոնարդո դա Վինչի

Կյանքի նպատակն էլ հենց դրանում է՝ ապրել այնպես, որպեսզի մահից հետո էլ չմեռնես:

Մուսա Ջալիլ

Մարդու կյանքը նման է լուցկու տուփի: Նրան լուրջ վերաբերվել՝ ծիծաղելի է: Վերաբերվել անլուրջ՝ վտանգավոր է:

Ռյուճունսե Ակուտագավա

Երիտասարդության տեսանկյունից կյանքն անվերջ ապագա է, ծերության տեսանկյունից՝ շատ կարճ անցյալ:

Արթուր Շոպենհաուեր

Երբեք մի վիճեք հիմարի հետ, մարդիկ կարող են չընկատել ձեր միջև եղած տարբերությունը:

Ռեյնբերնի կանոնը



ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆՎՅՈՒՆ

- Այդ սուրվարակիչ վիրուսային հիվանդությունը, որի հետ առնչվել են գրեթե բոլորը, բժիշկներն անվանում են «ինֆլուենցիա»: Իսկ ի՞նչ անունով է այն հայտնի ժողովրդին:
- Երկու գող ուսումնասիրում են խանութի ցուցափեղկը: Մեկը հարցնում է մյուսին. «Տեսնու՞մ ես այն գնդակա՞ն թարթ, ի՞նչ ես կարծում, ո՞րքան կստանանք նրա համար»: Ընկերը պատասխանում է. «Ամեն ինչ կախված է ...»: Ումի՞ց է կախված:

Նախորդ համարում զետեղված հարցերի պատասխանները

- Աբրահամ Լինկոլն:
- Ընկնում է, բայց կարողանում է բարձրանալ: